



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ք Ա Ր Ո Չ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 5-ՐԴ
ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱԶԱՐՈՒՄ
(1960 թ.)

Վասնպի, առանց հայրենի կենդանի իրականության, սփյուռքը ունայնություն է, առանց Ս. Էջմիածնի՝ Անթիլիաս հուսահատություն է:

Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնը միշտ դավանած է և պիտի դավանի մեկ Հայ Եկեղեցի, մեկ Հայ Ազգ, մեկ Հայ Հայրենիք, մել ճակատագիր և մեկ ապագա:

Կ Ո Ն Դ Ա Կ

ԱՌԱԲԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ ՄԱՀՎԱՆ
ԵՐԵՔՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ
(21 հունվար 1970 թ.)

Հայաստանը ամբողջ, աշխարհի մըն էր ավերակներու և փլած հոգիներու, հուսահատության ծանր կապարի տակ կքած: Հայը կորսնցուցած էր զգացումը՝ իր ազգության, իր քաղաքակրթության: Մոոցված էին գիր ու գրականություն: Հանգած էր ոգին հայոց պատմության: Իսկ վերջին հարվածը եկեր էր իշեցնելու, մեր անտեր ու թշվառ ժողովուրդի գիշուն, Ծահաբապան բռնագաղթը, երբ տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ քշվեցան դեպի հեռավոր ափերը Պարսից երկրին: Կթվեր թե տասնյոթերորդ դարը տապանաքար պիտի դնե հայոց պատմության:

Ահա այդպիսի դաժան դարու մը սեմին, այդպիսի ողբերգական մեկ պահուն, մեր պատմությունը կարձանագրե ոգեկան ուժերու անհավատալի ու

վարմանայի վարթոնքի մը փայլատակումը: Հայոց աշխարհի քառսին մեջ, շարժի կակսի լուսի մը ձառագայթը:

Վանքերու խուզ անկյուններին, դարերու մոխիրը թոթափած, տեսիք ունեցող հայ վանականներ, կրարձրացնեն իրենց ճակատները դեպի երկինք, կսթափին ցեղին մահվան քուննեն, կզգան հոգեվարքը Եկեղեցին ու ապօհն, ու կուսնեն ճանապարհը փրկության: Այդ օրերուն տակավին կարելի չէր մտածել իսկ ապօհն ապատագրական շարժումի մը մասին, բայց փրկարար լուսը կակսի ճամբա բանալ՝ կրոնական վարթոնքի և ապօհնին դպրության ուղիով:

Այդ հոգեսր ու ապօհն վարթոնքի առաջին դրոշակակիրները կհանդիսանան հույլ մը ուխտյալ վանականներ, որոնք իիմը դրին Սյունյաց մեծ Անպատին, Տաթևի վանքին մոտ, ժե դարու սկիզբներուն:

Կ Ո Ն Դ Ա Կ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ

ՀԻՄՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

(24 ապրիլ 1970 թ.)

Ցնծա հայ ժողովուրդ, քանզի սուրբ գրական Արարատի ստորատին, ահա հիսուն տարիներե ի վեր կա ու կվարգանա քու նախահայրերուդ Մայր երկիրը Հայաստան, խաղաղ ու ապահով:

Այս պատմական տարեդարձի սեմին, պահ մը նայե դեպի անցյալը հեռավոր, անշփոթ տեսնելու և ուղիղ գնահատելու համար լուսավոր ներկան:

Փառքի դարերե ու անկրկնելի լուս իրագործումներե հետո, դուն տեսար անկյումը թագումի մայր քաղաք Անիին, և ապա քայլքայումը հայկական վերջին պետության ի Կիլիկիա: Հաջորդեցին վեց ահարկու դարեր, որոնք տարին քեզ դեպի ներկը մահվան անդունդին: Դարեր ստրկության, հալածանքներու, դարեր ավերումներու, կոտորածներու, դարեր՝ գաղթի ու անվերջ ցրվումի դեպի հեռավոր ափեր կրոստյան:

Հայաստան, շատերուն համար դարձած էր լոկ աշխարհագրական հասկացություն, իսկ դուն, հայ ժողովուրդ, անուն չունեցող ամբոխ: Քու իսկ պապենական հողի վրա, դուն ձորտ էիր, իրավակուրք ցեղ, հանդուրժված փոքրամասնություն:

Բայց եկավ ժմթ դարը և քեզի բերավ՝ հրաշքի համապոր վարթոնքի ավետիսը: Արթնցավ հոգիդ, հավաքեցիր ուժերդ կամքի, փշրեցիր կապանքներդ դարավոր և խավարեն դեպի լուս թօնար իբրև Սիեր Սասունցի, շողացնելով թուր կայծակին:

Հնչած էր ժամը հայ պատագրական շարժումին: Հերոսական մաքառումներ, պատմություն կերտող քաշեր, անհավասար կոչիվ, նահատակություն, ծանր հուսախարություններ, և հետո՝ մեծագույն աղետը հայոց պատմության, 1915-ի Եղեռնը Ապրիլյան, առաջին ցեղասպանությունը քաղաքակիրթ կոչված մեր դարուն:

Կթվեր թե փակված է գիրքը հայոց պատմության և վերջն է Հայաստան երկրին:

Բայց ոչ, Աստված չէր լքած զքեզի: Նոր հույս, նոր հավատք և նոր ուժ տվալ քեզի, և քաջ որդիներդ, իրենց սուրբ արյունով՝ կերտեցին, բարձրացուցին հաղթության նոր կոյտողը Սարդարապատի, Արարատին ընծած, ու թեև պահ մը, Ալեքսանդրապոլի սև թուղթը սպառնաց խեղդամահ ընել քեզ և ոտքի կոխան հայրենիքդ սուրբ, ահա 1920-ի վերջին ամսու սեմին, ոռոսաց եղբայր

ազգության հումկու բազուկը օգնության հասավ քեզի և խպառ չքացավ վտանգը մահացու: Պայծառացավ երկինքը, աշխարհին հայոց: Ծագեցավ արեգակը արդարության և խաղաղության, և շինարար հառաջընթացքի: Սկսար աճիլ ու ծաղկիլ, հացով ու լուսով առատ:

Սարդարապատի հերոսները և անոնք, որ պատռեցին Ալեքսանդրապոլի թուղթը անհրավ, վերջնապես հաստատեցին ամուր հիմքերը հայկական նոր պետության: Առանց մայիսյան Սարդարապատի, Ալեքսանդրապոլի մահացու ծրագիրը ի կատար պիտի ածվեր 1918-ին, առանց 1920-ի նոյեմբերյան վահանին, պիտի փեր Սարդարապատի կամարը հաղթության:

Սարդարապատի հերոսամարտով և նոյեմբերյան լուսաբացով, վերջ գտավ թշվառ ու անտեր վիճակը Մայր Հայաստանին:

Խ Ո Ս Ք

ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ, ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

(4 մայիս 1973 թ., Ուստր)

Անցյալ դարուն, Հայաստանի արևելյան և արևմտյան շրջաններուն մեջ վարգացող հայ ազատագրական, հեղափոխական շարժման՝ բնական, արդար և անհրաժեշտ երևույթ էր: Թե այդ տարիներուն կատարվեցան ճակատագրական սխալներ, իրու հետևանք քաղաքական միամիտ դատումնեուու և շատ զգացական գործելակերպերու, չեն կրնար փոխել այսօր մեր ընդհանուր գնահատականը հայ ազատագրական շարժման նկատմամբ, և չեն կրնար ստվեր նետել՝ ազատության արյունոտ ճանապարհին զոհված մեր ժողովուրդի հերոս զավակներու հիշատակին վրա, հիշատակ, որ միշտ սուրբ պետք է պահի, հիշատակ, որուն համար բոլոր ժամանակներու հայերը կրնան հպարտ ըլլալ:

Ք Ա Ր Ո Չ

ՓՐԿՉԻ ՀՐԱՀԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՒՆԻ ԱՌԹԻՎ

ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(14 ապրիլ 1974 թ.)

Ամեն անգամ, երբ հայ քրիստոնյան, Ավագ շաբաթվա օրերին, Հիսուսի խաչի ճանապարհի ողբերգությունն է ապրում և հոգեպես ուղեկցում Աստվածորդուն մինչև Գողգոթա և մինչև գերեզման, նա չի կարող մոռանալ, չի կարող չվերապրել մեր մարտիրոս ժողովրդի խաչի ճանապարհը, նա չի կարող մոռանալ անհայտ գերեզմանները երկու միջին իր նահատակների:

Սակայն, ո՞վ աստվածային արդարություն, հայ ժողովրդի լույս հավատքը մի անգամ ևս ճշմարտվեց, թե քրիստոնեական մահը ճանապարհ է դեպի փրկություն, դեպի հարություն, դեպի հավերժություն: Հիսուսի սուրբ հարության տեսիլքը իր սրտում, հայ հավատավոր ժողովուրդը մի անգամ ևս ձեղքեց մահվան խավարը և հասավ վերջապես մի լույս աշխարհի ափին և տեսավ արևածագը իր նոր կյանքի, վերականգնումովը կործանված իր պետականության, վերածաղկումովը իր ապօպային մշակույթի, ամբողջական վերակառուցումովը իր մայր հայրենիքի, եղբայրական ազգությունների այն մեծ ընտանիքում, որ ավելի քան կես դար է, ահա, եղավ ու մնում է միակ գրավականը մեր ժողովուրդի անվտանգության, խաղաղության և ապագա զարգացման:

Եթե քրիստոնեական հավատքը խարսխված է հարության գաղափարի վրա, արդար է, որ սուրբ Չատկի այս առավոտյան, երբ փառաբանում ենք հրաշափառ <արությունը Փրկչին մեր <խուսի Քրիստոսի, չմոռանանք հիշել նաև մեր Եկեղեցու ու ժողովոյի խաչի ճամփան և մանավանդ գրեթե հրաշքի համապոր մեր օրերի նրանց վերածունդը: Մարմին ու հոգի առած, ապրող ու շնչող, աճող ու ծաղկող պայծառ իրականությունն է այդ մեր արդյու ամենայն հայոց Մայր <Հայաստանի:

Խ Ո Ս Ք

ՈՒՂՂՅԱԼ ՆՈՐԻՆ ՄՐԲՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈՆ

ՊԻՄԵՆ ՊԱՏՐՈՒԱՔԻՆ

(Չագորսկ, 18 հուլիս 1974 թ.)

Մեր ողբերգական պատմության փորձը, ժայռակերտ այն հիմքն է, որի վրա բարձրանում է ոռւսաց և հայոց ժողովուրդների բարեկամության հաղթական կամարը, ամուր ու հավետ անխորտակելի: Սա Մեր կողմից արտահայտված ոչ թե ինչ-որ քաղաքական մի դատողություն կամ համոզմունք է, այլ հայկական համագային զգացում, որը բխում է մեր ժողովորդի՝ ապրելու, գոյատևելու, և ազատ զարգանալու գիտակցությունից:

Մենք, իբրև <այ Եկեղեցու առաջին սպասավորը, խորապես միսիթարված ենք, տեսնելով թե ինչպես մեր հայրենի պետությունը, այս սքանչելի բարեկամության հիմքերի վրա ոչ միայն ապրեց ու գոյատնեց, այլ վերջին հիսուն և ավելի տարիների ընթացքում հիմնովին վերակառուցեց իր քայլաված երկիրը, ստեղծեց տնտեսական-արդյունաբերական հկոր խարիսխ և ազատորեն զարգացրեց իր ազգային մշակույթն ու գիտությունը:

Սուրբ գրական Արարատի նայվածքի ներքո, <Հայաստանը երեք այսքան խաղաղ, այսքան ծաղկուն ու այսքան լուսառատ չի եղել:

Խ Ո Ս Ք

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ <ԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ

10-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

(Երևան, 27 դեկտեմբեր 1974 թ.)

Այսօր, կանգնած Սփյուռքահայության կոմիտեի գործունեության երկրորդ տասնամյակի սեմին, անհրաժեշտ ենք գտնում ընդգծել այն գաղափարը, թե հայ սփյուռքը այլևս մնայուն երևույթ պետք է նկատել, ինչքան էլ մեր զգացմունքները այլ բաղձանք ունենան: Նույնիսկ, եթե նախատեսնենք ապագա զանգվածային ներգաղթներ, այնուամենայնիվ, մեր սփյուռքը չի վերանալու: Ահա թե ինչու, Մեր կարծիքով, ըստ այնմ պետք է կազմակերպել և ղեկավարել կոմիտեի ապագա գործունեությունը:

Այս առնչությամբ հենց քիչ առաջ, երբ լսում էինք նախագահի վեկուցումը, Մեր մտքում առաջ եկավ մի գաղափար, որ կամենում ենք Հեղ հայտնել, իբրև առաջադրանք: Մեր մտածումն է, որ մոտ ապագային Սփյուռքահայության կոմիտեի կամ ավելի ճիշտ Երևանում բարձրագույն մի հաստատության կողքին հիմնվի մի բաժին, նվիրված սփյուռքահայության, որի նպատակը լինի պատրաստել հայ սփյուռքագետներ: Այս, Մենք հետպիեմտե համոզվում ենք, որ սփյուռքահայության հետ աշխատող մարդիկ պետք է բազմակողմանի գիտելիքներ ձեռք բերեն ու դառնան սփյուռքագետներ, այսինքն՝

հայրենիք-սփյուռքի անդաստանի մեջ աշխատող մշակներ, պատրաստված գիտական հիմունքներով:

Ն Ա Մ Ա Կ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ
ՅՈԹԱՍԱՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ
(1976 թ.)

Հայ մնալ, հայ ապրի կնշանակե մարդկային ոգեկանության վավերական ձևերեն մեկը իրականացնել աշխարհի քաղաքակրթության հորիզոնին վրա, զի հայ ժողովուրդի հոգևոր ու մշակութային ժառանգությունը համամարդկային ինքնատիպ արժեքներեն մին կհանդիսանա:

Հավատարիմ մնալ այդ ժառանգության, կնշանակե հայկական ազգային ձևերու մեջ համամարդկայինը ապրի ու կարգացնել՝ ոգեկանության բարձր մակարդակի մը վրա:

Խ Ո Ս Ք
ՈՂՋՈՒՅՆԻ, ՎԵՀԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ
(2 հոկտեմբեր 1977 թ.)

Հայ ժողովուրդը չի կարող մոռանալ իր ողբերգական անցյալը, չի կարող մոռանալ իր նահատակներին, չի կարող մոռանալ Օսմանյան Կայսրության 1915 թվին կազմակերպած ցեղասպանությունը, որին զոհ գնացին մոտ երկու միլիոն հայ մարդիկ, կանայք ու երեխաներ: Մեր օրերին մանավանդ, սփյուռքի տարածքի վրա ապրող հայերը, Մերձավոր Արևելքից մինչև Ամերիկա, հետպիետե ալեկոծվող հուկումով միասնաբար հանդես են գալիս արդար պահանջով, որ միջազգային ատյանների առաջ դատապարտվեն մեր դարի բոլոր ցեղասպանությունները և ազգությունների դեմ գործած ոճիրները, այդ թվում նաև 1915 թվի հայոց ցեղասպանությունը:

Ք Ա Ր Ո Չ
ԺՆԵՎԻ ՀԱՅՈՑ Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒՄ
(25 հունիս 1978 թ.)

Ամեն անգամ, երբ Մենք կգտնվինք այս կողմերը, հատկապես Ֆրանսա, միշտ Մեր գիտակցության առջև կպայծառանա պատմական մեծ հիշատակ մը: Զարմանալի կուգաղիղապությամբ, ճիշտ այն օրերուն, այսինքն 451 թվականին, երբ Ավարայրի դաշտին վրա, Տղմուտ գետի ափին, Վարդանը Կարմիր, իր զորավարները և իր քաջերը անհավասար կոիվ կմղեին խավարի և անհավատության ուժերու դեմ, ճիշտ նույն օրերուն գրեթե, այսօրվա Ֆրանսայի հողամասին վրա, Տրուա քաղաքեն ոչ շատ հեռու, այսպես կոչված Կատալոնյան դաշտերու տարածքին վրա տեղի կունենար նույնպես ունեցած ճակատամարտ մը, քաղաքակրթությունը և քրիստոնեությունը պաշտպանող բանակի և Աստիլայի հորդաներու միջև: Քրիստոնյա բանակի դեկավարն էր հոռվամայեցի Ետիոս կորավարը, Թեոդորիկ թագավորի օրոք: Այդտեղ Աստիլան շախչախվեցավ, և այդ պահեն սկսավ անոր նահանջը և վախճանը: Որովհետև, ինչպես գիտեք, ահավոր փոթորիկի մը նման Աստիլա դեպի Եվրոպա խուժած էր և ամեն բան քարութանդ ընելով իր առջև՝ կհառաջանար դեպի Արևմուտք:

Ահավասիկ սքանչելի և խորհրդավոր պատմական զուգադիպություն մը: Նույն տարին (451 թվականին), և հավանաբար նույն մայիս ամսուն, թե Արևելքի դրսերուն մոտ, և թե այստեղ, Արևմուտքի սրտին վրա, ճակատամարտ կմղվեր, նույն նպատակով և նույն արդյունքով՝ հաղթանակին համար Քրիստոսի Ավետարանին և քաղաքակրթության մեծ գաղափարներուն:

Խ Ո Ս Ք
ՀՐԱԺԵՑՏԻ ՃԱԾԿԵՐՈՒՅԹԻՆ
(Ժնև, 25 հունիս 1978 թ.)

Մեր վրա չափազանց խորունկ, մնայուն և տևական տպավորություն թողած է Ֆրանց Վերֆելի վեպին մեջ հերոսներեն մեկուն արտահայտությունը: Տեսնելով համատարած ողբերգությունը՝ Հայաստանի ժողովուրդին, ան կրացականէն. «Եկած է արդեն ժամանակը, որ այս արևին տակ այլևս կարելի չէ ապրիլ իրու հայ»: Դուք գրեթե բոլորդ, այդ դժբախտ ժողովուրդի զավակները կամ անոնց հաջորդներն եք, Մենք ալ մեջը ըլլալով: Բայց ահա Աստված մեկ չմոռցավ այնուամենային և, ինչ հրաշք, այդ ողբերգական օրերեն հավիլ երեք տարի հետո, ինչպես որ Քրիստոս երեք օր հետո հարություն առած էր գերեզմանեն, հայ ժողովուրդն ալ հարություն առավ Սարդարապատի հերոսամարտով, մայիսյան լուսաբացով: Հապար տարի հետո վերականգնվեցավ խորտակված հայկական պետականությունը և քայլ առ քայլ սկսավ վերակառուցվիլ և իր խորունկ ու բազում վերքերը ամոքել: Ահավասիկ այսօր 1978 թվականին մեր ազգը այլևս հեռու է այդ ողբերգական օրերու վիշտեն, ցավեն, թեն չի մոռնար այդ մեծ եղեռնը ու երեք չպիտի մոռնա: Այսօր մեր առջև կրացվի վերածնած ժողովուրդի մը կյանքին պատկերը, մեր այսօրվա մայր հայրենիքով, ուր երեք միլիոն հայեր միատեղված են: Եվ ամեն տարի վաթսուն հազար երեխա կծնի Հայաստանի մեջ: Մեր ներկա երկիրը մեր բոլոր ազգային երազանքներու իրականացման ապառաժա իրական գրավականն է:

Խ Ո Ս Ք
ՎԵՀԱՐԱՆՈՒՄ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄԻԱՎՈՐՄԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ
(3 հոկտեմբեր 1978 թ.)

Առանց վարաներու կարելի է հաստատել, թե 1828 թվականը սկսենավորումը հանդիսացավ համայն հայության ազգային գիտակցության զարթոնքին և ապատագրական շարժման ու նրա հետագա զարգացման:

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացումը, հայ ապատագրական շարժումը, Սարդարապատի ճակատամարտը և հայկական պետականության վերականգնումն ու արդի հայրենի վերածնունդը իր բոլոր նվաճումներով հայոց պատմության հորիզոնի վրա գտնվում են ուղիղ գծով միևնույն տրամաբանական ու նպատակալաց զարգացման ճանապարհի վրա: Այդ իրադարձությունները պատմական հանգրվաններն են հայ դատի լուծնան ճանապարհին:

Մենք, Մայր Աթոռի միաբաններս, նաև հպարտ ենք այսօր, որովհետև Արևելահայաստանը Ռուսաստանին միանալու պատմությունը անմիջականորեն կապված է: Սուրբ Էջմիածնի գահակալների և հատկապես Ներսես Ե Աշտարակեցի Հայրապետի կյանքի ու գործունեության հետ: Անվարան կարող

Ենք վկայել, թե Ներսես Կաթողիկոս Աշտարակեցին կենտրոնական գործող դեմքն է հանդիսացել արևելահայոց ազատագրման և Արևելահայաստանի հայացման գործում: Ի մասնավորի նրա գերմարդկային ճիգերի շնորհիվ է, որ նախկին Պարսկահայաստանի հավիվ քան հազար հայ ազգաբնակչության թիվը շատ կարծ ժամանակում քառապատկվել է: Նույնպիս նրա խիստավոր ազգային պարտական ոռուսական վորքերի փայլուն հայոթանակը Օշականի ճակատամարտում, որով փրկվեց Ս. Էջմիածնի վանքը և ամբողջ շրջանը բնաջնջումից: Օշականի ճակատամարտում, Ներսես Աշտարակեցու մտերիմ բարեկամ ու գործակից կոր. Կրասովսկու հրամանատարության Ներքո, համեմատությունները պահելով, Սարդարապատյան մի հայոթանակ հանդիսացավ իր ժամանակին:

Ահա թե ինչու պարտավոր ենք այսօր ազգովին խոր երախտագիտությամբ և հարգանքով իիշել ազատարար ու հայրենաշեն Հայրապետի՝ Ներսես և Աշտարակեցու հերոսական գործը:

Խ Ո Ս Ք

1827-ԻՆ ՕԾԱԿԱՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾ

ՌԴԻՆ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՀԻՉԱՏԱԿԻՆ

(3 հոկտեմբեր 1978 թ.)

Այս հուշարձանը կառուցվել է 1828-ից մի քանի տարիներ հետո երջանկահիշատակ Ներսես և Աշտարակեցի կաթողիկոսի որոշումով և Մայր Աթոռի միջոցներով, ի նշանավորումն ոռուսական բանակի վինվորների նահատակության:

Այսօր բոլոր հայերը, որ ի Հայաստան և որ ի սփյուռք աշխարհի, իիշում են անցյալը, որպեսպի իրենց երախտագիտությունը հայտնեն զոհված ոռուս հերոսների հիշատակին, բայց նաև, որպեսպի հստակ տեսնել կարողանան իրենց ազգի ապագա կյանքի ուղիղ ճանապարհը: Վայ այն ժողովրդին, որ հիշողություն չունի, որ չունի հստակ գիտակցությունը պատմական փորձի, որ միջազգային միշտ ալեկոծ, միշտ շփոթեցուցիչ հողմերից տարութերված կորցնում է: Իր կենսական շահերի ուղին, երբեմն շանալով խարութիկ երեւույթներից, երբեմն մղմելով գերզագական պատրանքներից, երբեմն մղորվելով անիրականալի խոստումներից:

Հայ ժողովուրդը, որ իր քաջ որդոց ծով արյան ճանապարհով հասել է մեր օրերի իր ազգային վերածնունդի լուսաբացին, իր պետականության կապմավորման, միշտ ոռու ժողովրդի եղբայրական օգնությամբ, այսօր դարձել է արդեն իր գերագույն շահերին գիտակից ազգություն, իր սեփական ուժերի վրա հավատք ունեցող ազգություն, իր ապագայի նկատմամբ լավատեսությամբ համակած ազգություն: Նաև մի ազգություն, որ գիտե հարգել ու փառավորել հիշատակը իր վավակների հերոսական ճիգերի և զոհաբերումների, որոնք արյամբ ներկեցին հայոց ազատագրական պայքարի ճանապարհը: Սրբազն պայքարի մի ճանապարհ, որի վրա իրենց արյունը թափեցին նաև մեր ոռու եղբայրները և ոչ միայն 1826—28-ի շրջանին, այլև 1915-ին՝ փըրկելով երկու հարյուր հազար վասպուրականցի հայերի կյանքը օսմանյան ցեղասպանությունից, 1918-ին՝ իրենց գործոն մասնակցությունը բերելով Սարդարապատի հայոց մեծ հայոթանակին, 1920-ին՝ Հայաստանից դուրս քշելով Կարաբեքիր փաշայի բանակները և պատռելով Ալեքսանդրապոլի մև դաշնագիրը:

Այսօր այս հուշարձանի առաջ կանգնած պարտավոր ենք իիշել այս բո-

լորը, պարտավոր ենք գիտակցել, թե պատմությունը ինչ-որ հեռու անցյալում տեղի ունեցած դեպքերի պարզապես մի շարադրանք չէ, պարտավոր ենք զգալ, թե պատմությունը մեզ հետ քայլում է և քայլ առ քայլ հարատացնում մեր ազգային հավաքականության կենսափորձը։ Անցյալի փորձառությամբ լուսավորված պարտավոր ենք հառաջ ընթանալ դեպի մեր ապագան, մեր ուժքորի տակ մայր հողը ունենալով որպես ամուռ պատվանդան։ Ու այդ պատվանդանի վրա կանգնած և այդ պատվանդանից միայն պարտավոր ենք դիտել համայն աշխարհը ու դատել իրադարձությունները միջազգային կյանքի։

Խ Ո Ս Ք

ՓԱՐԻԶԻ «ԳԱՎՈ»-Ի ՍՐԱՀՈՒՄ, ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐԻՒ

ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՌԹԻՎ

(27 մայիս 1979 թ.)

Մեր գիտակցության մեջ, հայոց նորագույն պատմության հորիզոնի վրա, 1828 թվականով սկսած արևելահայության մշակութային և գրական զարթոնքը, պատառգրական շարժման ծնունդն ու զարգացումը, Սարդարապատի հայթանակը, հայ պետականության վերականգնումը, մայիս 28-ը և նոյեմբեր 29-ը՝ ուղիղ գծով կգտնվին պատմական զարգացման միևնույն ճանապարհի վրա։

Այս հարցերու առնչությամբ, Մեր կարծիքով, մենք՝ հայերս, այևս չպետք է վիճնքը։ Նոյեմբեր 29-ով փրկվեցավ այն, ինչ որ շահած էինք Սարդարապատով։ Սա կենսական կարևորություն ունեցող ճշմարտություն մըն է։

Նոյեմբեր 29-ն է, որ պատոնց սև դաշնագիրը Ալեքսանդրապոլի, դուրս վտարեց Կարաբեքիր փաշայի կորքերը Հայաստանեն և վերջնականապես ամրացուց հիմքերը նորաստեղծ հայ պետության՝ անվտանգության, խաղաղության և աննախընթաց զարգացումի և վերաշինության պայմաններուն մեջ։

Վիճելի հարցեր կրնան ըլլալ. բոլոր ժողովուրդներու պատմության մեջ կարևոր թվականներ, իրադարձություններ, հաճախ վեճի առարկա կդառնան. պետք է թողունք պատմաբաններուն և ժամանակին։

Խ Ո Ս Ք

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՅԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԵՎ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

(1 հունիս 1979 թ.)

Մեր կարծիքով, հայ հոգևորականը պետք չէ կուսակցական-կողմնակցական որևէ դիրք որդեգրե։ Մեր առաքելությունը կուսակցական չի կրնար ըլլալ։ Հոգևորականը որևէ կողմի պետք չէ պատկանի։ Հոգևորականի առաքելության բուն չութենեն կրիսի այդ անհրաժեշտությունը։ Եթե հոգևորականը կողմ ըլլա, այդ կնշանակե միուս կողմին հակառակ ըլլալ, և ատիկս իր առաքելությունը կվտանգե։ Որով, հոգևորականը իր մասնակցությամբ, իր գործակցությունը, իր խոսքը պետք է բերե բոլոր այն ձեռնարկներուն, որոնց շուրջ վեճ չկա, որոնց շուրջ կողմեր չկան։ Օրինակով խոսելու համար ըստնք. մենք ազգային տոնակատարություններ ունինք տարվան ընթացքին, որոնք կրնորոշեն հայ հանրային կյանքի դիմագծությունը։ Օրինակ՝ Վարդանանց պատերազմի տոնակատարությունը։ Մեր ժողովորդի ծոցին մեջ ոչ մեկ վեճ կամ տարակարձություն կա այդ մասին։ Հետևաբար հայ հոգևորականը առաջին զժի վրա պիտի ըլլա անշուշտ, Վարդանանց պատերազմի տոնակատարու-

թյանց առիթով: Նույնը կարելի է ըսել Ապրիլ 24-ի նահատակաց սգատոնի կամ Սարդարապատի ճակատամարտի ոգեկոչումի մասին: Ահավասիկ այս պիսի և այլ նման ձեռնարկներու առիթով է, որ հայ հոգևորականը իր գործոն ու եռանդուն մասնակցությունը պետք է բերե:

Խ Ո Ս Ք

**ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՍՓՅՈՒՌԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ
ԺՈՂՈՎՈՒՄ**
(Երևան, 24 նոյեմբեր 1980 թ.)

1920-ին, մի պահ թվում էր, թե հայ ժողովուրդը պիտի ընդմիջու կորց-ներ ա'ն, ինչ շահել էր Սարդարապատի հերոսների արյունով:

Նախախնամությունը սակայն այլ կերպ էր սահմանել մեր ճակատագիրը: Եվ Հյուստանի մթազնած երկնակամարի վրա նորից փայլատակեց լուսավոր աստղը Հյուսիսի: Մեր դարավոր թշնամու դեմ, վերստին ծառացավ մեր դարավոր հվոր բարեկամը՝ ոռւս ժողովուրդը, իր կարմիր բանակով, որ պատռեց սև դաշնագիրը Ակեքսանդրապոլի և հեռու շպրտեց հայ արյան ծարավի վորքը Կարաբեքիր փաշայի:

Այսպես ահա փրկվեց անդունդի եպրին հասած մեր ժողովուրդը: Մարմին, հոգի առավ նոր Հյուենիքը Ամենայն Հայոց՝ խաղաղության, ընկերային արդարության և ազգային ազատության շեփորումով:

Խ Ո Ս Ք

ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀԻՇԱՏԱԿԻՆ
(24 ապրիլ 1981 թ., Վիեննա)

Ծիծեռնակաբերդը, այն թաքրոր լեռն է մեր ազգին, մանավանդ հայաստանցիներուն, ուր բոլոր հայերը առանց խտրության, հոգին կմիաձուվին, կպայծառակերպվին, կթոթափեն իրենց վրայեն ամեն տեսակի տարբերություններ, հեռավորություններ: Այստեղ բոլորի սրտերը կտրոփեն նույն զարկով, բոլորը կդառնան մեկ մարմին, մեկ կամք, մեկ ճակատագիր:

Կրաքարանան հայերը Ծիծեռնակաբերդն ի վեր, խիտ շարքերով՝ լուռ, ինքնամփոփի, ինքնամոռաց, առանց շատախոսության, առանց ցուցադրական դրսնորումներու, առանց անհավասարակշիռ արարքներու: Հայ հոգին է, որ հեղեղի պես կիոսի անվերջ, համաշափ, կարգապահ: Ամեն ինչ բնական է ու հարազատ, ամեն ինչ անկեղծ է ու անարատ: Բոլորը կքալեն կողք-կողքի, եղբայրացած, իբրև հին-հին ծանոթներ, մտերիմներ—Հայկ նահապետի օրերն ի վեր, մեկը մյուսին հավատարիմ ուղեկիցներ, մեկը մյուսին հնապանդ վիճակությաներ:

Եվ կքալեն հայերը ինքնավստահ ու լավատես, վերանորոգելով նաև իրենց ուխտը հայրենաշեն ստեղծարար աշխատանքի, ամեն օր, ամեն ժամ ա'լ ավելի շեն և ա'լ ավելի ծաղկյալ դարձնելու համար արյան, հեղեղներու գինով ձեռք բերված այսօրվան մայր երկիրը Հայոց, որ իրականացած երազն է մեր անթիվ անհամար զոհված սերունդներուն, և ամենափառավոր հուշարձայնը՝ նվիրված անոնց սուրբ հիշատակին:

ԽՈՍՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ

75-ԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

(9 մայիս 1981 թ., Փարիզ)

Բարեգործական այս մեծ Միությունը հատկանշող լուսավոր նկարագիրն է նաև՝ անոր ոգեկան միասնությունը, գաղափարակցությունը և սերտ գործակցությունը Հայաստանյաց Առաքելական Եկեղեցվո հետ։ Բարեգործականի մարդիկ, ի սկզբանե և մինչև այսօր եղած են հայ քրիստոնյա հոգիներ և հավատարիմ զավակները հայոց Մայր Եկեղեցվո։ Այս կնշանակե թռ < Բ. Ռ. Ը Միության երջանկահիշատակ հիմնադիրները և անոր հետագա դեկապարները գիտցած են իրենց կյանքի ու գործունեության լասու ամրացնել մեր ազգի հոգեկան ամենախոր, ամենաամուր ու ամենաանսասանելի վեմին վրա, որ Հայ Առաքելական Եկեղեցին է, ահա մոտ երկու հազար տարիներ ի վեր։ Եվ պատահական չէ, որ Բարեգործականը իր գոյատևման առաջին օրերեն մինչև մեր օրերը տևապես վայելած է գնահատանքը, խրախուսապը և օրինությունը Հայոց Հայրապետներուն։

ԽՈՍՔ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՅՈՒՐԻ ԱՆԴՐՈՊՈՎԻ

ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(12 փետրվար 1984 թ.)

Սիրեկի ժողովուրդ, մեր փոքրիկ երկիրը՝ Սովետական Հայաստանը, ավելի քան երեք միլիոն բնակչությամբ, անբաժան մասն է կազմում Սովետական Միության հսկայածավալ երկրի, բազմազգ այս պետության։ Մեր մայր երկիրն էլ այդ հանրապետություններից մեկն է, որով մենք հոգով և սրտով, մեր բոլոր մտորումներով, մտահոգություններով, նաև մեր ազգային իդեալների իրականացման հեռանկարով կապված ենք անքակտելի կերպով Սովետական Միության այս մեծ ընտանիքին, այն հաստատ գիտակցությամբ, որ մեր ժողովուրդը անցյալում բազում դարեր տառապած, շահագործված և նույնիսկ նահատակված, իր վերջնական խաղաղ և ապահով կյանքը գտավ շնորհիվ ուս ժողովրդի եղբայրական օժանդակության և շնորհիվ Սովետական Միության հզոր հովանավորության։ Առանց դրան մեր ժողովուրդը ստույգ կերպով ենթակա կլիներ բնաջնջման և կործանման, այնպես, ինչպես այդպիսի ահավոր ճակատագիր ունեցավ Արևմտյան Հայաստանը առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, ինչպես բոլորդ քաջ գիտեք։

Հետևաբար, երախտապարտ սրտով, հայ ժողովուրդը հավատարիմ կմնա Սովետական Միության ժողովուրդների եղբայրության, միասնության և գործակցության ուխտին։ Մեր ժողովուրդի գոյատևումը, նրա կյանքի ապահովությունը, ազգային մշակույթի զարգացումն ու շինարարական մեծ նվաճումները, որոնք տեղի են ունենում մեր երկրում այս վերջին վաթսուն և ավելի տարիների ընթացքում, երաշխավորվում են այդ իրողությամբ ու ճշմարտությամբ։ Եվ դեռ ավելին, մեր ամբողջ ազգը ի Հայաստան և ի սփյուռ աշխարհի, իր ապագայի արդար երազանքների իրականացումը կապում է Սովետական Միության բախտի հետ, նրա ճակատագրի, նրա ապագա նորանոր հաղթանակների հետ։

ԽՈՍՔ

ՈՂՋԵՐԹԻ ՀԱՄԵՐԳԻՑ ՀԵՏՈ
(Բուենոս Այրես, 21 մայիս 1984 թ.)

Հայ պատագրական շարժումը պատահական երևույթ չէր, այլ պատմականորեն բնական երևույթ էր, արդար և անհրաժեշտ: Այդպիս է, որ 1918 թ. մայիսի վերջերուն, հայաստանցի ժողովուրդը ճակատ առ ճակատ կանգնեցավ դարավոր թշնամիին դեմ: Մահու և կենաց ժամը հասած էր, և հակառակ այն ատեն Հայաստանի ժողովուրդի շատ ծանր պայմաններուն, շատ ավելի փոքրաթիվ բանակով, գրեթե առանց բավարար զինամթերքի, առանց սնունդի, առանց ռազմական մասնագետներու, ամբողջ ժողովուրդը իր բոլոր խավերով ոտքի կանգնեցավ, նաև հոգևորականներու առաջնորդությամբ կրցավ հումկու հարված հասցնել մայիսի 22-ի, 23-ի օրերուն: Առաջին անգամն էր, որ վեց հարյուր տարի ստրկութենել հետո յաթաղանը գետին ինկավ և կիսալուսի դրոշակը հայ զինվորին առջև խոնարհվեցավ:

Հայաստանի Հանրապետության շրջանին նույնպես հայ ժողովուրդը ծանր կացություններու մեջ գտնվեցավ: Այդ երկու տարիներու ընթացքին մեր դրացիները չորս անգամ հարձակում գործեցին Հայաստանի վրա, որովհետև չէին հանդուրժեր գոյությունը հայ պետականության մը: Երեք հարձակումներուն հայերը կարողացան դիմադրել և ետ մղել թշնամիները, բայց չորրորդ հարվածը, այս անգամ Արևմուտքեն, Կարաբեքիր փաշայի ղեկավարությամբ, 1920-ի աշնան, մահացու եղավ Հայաստանի համար: Հայ ժողովուրդը նորեն մնացած էր մինակ և անօգնական: Անգիտացները այդ օրերուն Վրաստանի մեջ էին, մեր դաշնակիցներն էին Սկրի դաշնագրի տակ ստորագրողները, խոստումներ տվողներն էին, բայց իրենց մատը մատին չկարկին, որպեսպի պաշտպանեն Հայաստանը այդ ահավոր վտանգեն: Կարաբեքիր փաշան գրավեց Կարսը, մտավ Հայաստան, նստավ Ալեքսանդրապոլ քաղաքը և պարտադրեց իր սև դաշնագիրը, որ կկոչվի «Ալեքսանդրապոլի դաշնագիր», որով փոքրիկ Հայաստանը թուրքական ողորմածության կիանձնվեր: Այդ ճակատագրական պահուն էր, որ իշխանության փոփոխություն եղավ: Հանրապետության կառավարությունը պաշտոնապես իշխանությունը հանձնեց ուրիշ նոր զարգացող հայկական ուժերու, որոնք Հյուսիսի մեր դարավոր բարեկամ ժողովուրդի՝ ոռւս ժողովուրդի զինվորական օգնությամբ կարողացան դուրս շարուել Կարաբեքիր փաշայի բանակները և պատռ-պատառ ունել Ալեքսանդրապոլի դաշնագիրը: Եթե այդ հեղաշրջումը չկատարվեր, Հայաստանը, հայ ժողովուրդը պիտի կորսնցներ այն, ինչ որ շահած էր Սարդարապատով: Փոկված Հայաստանի առջև բացվեցան նոր կյանքի պայմանները, խաղաղ վերաշնուրթյան, լարված աշխատանքի տարիները, որպեսպի կամաց-կամաց մեր երկիրը վերակառուցվեր, և մեր ժողովուրդը բուժեր իր խորունկ վերքերը:

ԿՈՆԴԱԿ

ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ
ՈԳԵԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(24 ապրիլ 1985 թ.)

Հիրավի հայոց պատմությունը մի դյուցավոներգություն է վասն Հիսուսի և վասն արդարության: Այդ հավատքը լուսավորեց մեր ազգի հոգին ու մար պատմությունը, Սուրբ Գրիգոր Լուսավորչից սկսյալ, բայց մանավանդ հինգե-

րորդ դարի Ավարայրի ճակատամարտից: Անցնող տասնհինգ դարերը վկայում են՝ թե սրբազն մարտը վասն հավատու և վասն հայրենյաց ազատության, արիաբար շարունակվեց տարբեր պայմաններում, տարբեր գաղափարական տարապներով, տարբեր դրոշներով, բայց միշտ ի խնդիր քրիստոնալիանդ նույն արդարության հայտանակի, միշտ ի խնդիր նույն հավերժական Հայաստանի:

Մեր ազգի պատմությունը մի կենդանի հուշարձան է աշխարհի հորիզոնի վրա բարձրացող, մարմին ու կյանք առած նահատակների արյունով, բարուն և գեղեցիկին ծառայելու ստեղծարար հանձարով, սեփական ազգ ու ազատ հայրենիք կերտելու սրբազն կրքով: Եվ այդպես ահա նա բացել է դռները իր հոգու ուժերի, դռները հավիտենական կյանքի:

Այսօր, Մայր Հայրենիքում թե սփյուռքում բնակվող բոլոր հայերը, առավել համերաշխած ու եղբայրացած, Աստուծո և պատմության առջև բերելու նն իրենց նվիրական վկայությունը, թե նաև մեր օրերին և գալիք ժամանակներում, շարունակելու են այդ սրբազն մարտը անմար հավատքով ու աներեր վճռականությամբ, առանց կորցնելու իրատեսության զգացումը, առանց անհավասարակշիռ արարքների և մանավանդ առանց մոլորվելու ու հեռանալու մեր ոտքի տակ գտնվող հայրենի հողի հրամայականից, որ միակ գրավականն է մեր ազգային գոյատևման և մեր արդար իղձերի ապագա կենսագործման: Մեր օրերի վերաշինված ու ծաղկող մայր երկիրը սուրբգրական Արարատի փեշերին, 1915-ին նահատակված մեր ժողովրդի հիշատակը հավերժացնող վեհագույն հուշարձանն է և անվերջ հույսի փարոսը արդարության լրումի: Մեր նահատակները մեռան ապրելու հույսով և հայոց հայրենիքի վերածննդյան տեսիլքով:

Այսօր, այդ սև օրերից յոթանասուն տարիներ հետո, մեր Եկեղեցին իր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով և հայրենաբնակ մոտ երեք ու կես միլիոն ժողովրդով, իրենց մայր հողի վրա կանգնած ապահով ու ինքնավստահ կերտում են Ամենայն Հայոց առավել լուսավոր ապագան՝ իրենց հայացքը հառած դրախտի դրու Արարատին և սպասում են ժամանակների ճամփին արթուն աչքով ու լավատես: Եվ պիտի սպասեն նրանք ու նրանց զավակները, եթե հարկ լինի ևս յոթանասուն տարի՝ նույն ուխտով, նույն երազանքով:

... Ազգ իմ սգավոր, ոչ հուրը, ոչ ջուրը և ոչ էլ ժամանակը, Օսմանյան կայսրության ճակատից ու աշխարհի հիշողությունից չեն ջնջելու սև խարանը մեծ ոճիրի, մինչ դու արևի ու արդարության ծարավի ժողովուրդ, քո հայրենիք բարձունքներից պիտի շարունակես տիեզերքին տենչալ ու ազատ սլանալ դեպի աղբյուրները լույսի...

